

4541

I
Horn

491.99-8

S-45

1901

SB 2002
M

Ն. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

Թ. Վ. Մ. 1. 233

արթ

ԵՆՅՐԵՆԻ ԼԵՋՈՒԻ



Ա. ՏԱՐԻ

491.99-8
S-45

Արմ.
3-2702a

491.99-8

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԵՐԵԱՆ

S-45

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԻԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿԶԻՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

35-երորդ թիվ

ИИВ. № 21291
Թ Ի Յ Լ Ի Ս

ՏԳԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ № 3.

1911

2010

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Ա. ՏԱՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ

1030 է. հետևել 1871 թուի սեպտեմբերին, այսինքն սրահից ուղիղ 40
սարի առաջ:

44248 ա.հ.



29322-63

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս դասագիրքը կազմելիս՝ մենք իսկզբանէ այն կարծիքին ենք եղել, որ առաջին և երկրորդ տարուայ ուսուցման նիւթերը համապատասխան բաժանմունքներում պէտք է մի ուսուցչի ձեռքի լինին և դա պէտք է լինի մայրենի լեզուի ուսուցիչը. մենք կարծել ենք, որ մայրենի լեզուի դասագիրքը, աւելի շատ քան մի ուրիշը, կոչուած է նիւթ մատակարարել ուսուցչին, բացի լեզուի դասերից, նաև միւս օժանդակիչ առարկաների՝ բարոյախօսութեան, իրազնութեան և վայելչագրութեան համար. մենք կարծել ենք և կարծում ենք, որ բոլոր առարկաները, նաև թւաբանութիւնն ու հայրենագիտութիւնը, միևնոյն ուսուցչի ձեռքին լինելով և աւելի կապակից ու ներդաշնակ ընթանալով մայրենի լեզուի դասերի հետ, մանուկների յիշողութեան մէջ խառնաշփոթութիւն չեն մտցնիլ, նրա գլխի մէջ, եթէ կարելի է այսպէս ասել, չեն գրաւիլ այս ու այն խորը, առանց գիտենալու՝ թէ որպիսի ոք է հարեան խորշի բնակիչը: Ահա այս է պատճառը, որ մենք աշխատել ենք ոչ միայն լեզուի ուսուցման համար բազմակողմանի վարժութիւններ տալ այս գրքի մէջ, այլ և նրան զուգընթաց տուել ենք միւս օժանդակիչ առարկաների համար բաւականաչափ նիւթեր. մենք զուգակցել ենք բարոյախօսականը իրազնականի, նկարագրականը պատմողականի, արձակը չափաբերականի հետ... Ուզում ենք հաւատալ, որ այս փոքրիկ գրքոյկը խնամքով անցնելուց յետոյ, տարուայ վերջին ամենայն ոք կը համոզուի թէ սրբան կարևորագոյն նիւթեր է ամբարել մանուկը թէկուզ հէց միմիայն մայրենի լեզուից:—Պետական ուսումնարաններում, ուր մայրենի լեզուի ուսուցումը սկսում է արդէն գրագէտ մանուկների հետ և ուր դասատուն կարիք չունի ցուցադրած մանրամասնութիւնների մէջ մտնել, այս գրքոյկը հայ աշակերտներին, այսուամենայնիւ, շատ ու բազմազիմի նիւթեր է տալի՝ բառագիտութեան, զրուցատրութեան, փոխադարձ թարգմանութեան և բերանացի ու զրաւոր վարժութիւնների համար:

Ընթերցողը կը նկատի, որ այս տպագրութեան ժամանակ մենք աշխատել ենք այնպիսի փոփոխութեան ենթարկել մեր դասագիրքը, որ սա կարողանայ միաժամանակ ծառայել հայախօս

Վայելուչ գրութիւնը մենք ինքնուրոյն և անկախ առարկայ ենք ընդունում, այդ պատճառով այս դասագրքի սկզբում տալիս ենք միայն մի-մի տառ և վերջումը դնում ենք ամբողջ այբուբենը: Ուսումնարանը վայելչագրութեան համար պիտի ունենայ առանձին դասեր, անկախ լեզուի դասերից: Գրաւոր վարժութիւնները, որոնք երկու նպատակ ունին, ուղիղ գրել, և վայելուչ գրել, պիտի յաջորդեն և ոչ նախորդեն սպառիչ վարժութիւններին, մանաւանդ օտարախօս հայ մանուկներին ուսուցանելիս:

Անշուշտ խօսք կը լինի, թէ ինչպէս կարող է միւսնոյն նիւթը միաժամանակ պիտանի լինել հայախօս և օտարախօս հայ մանուկներին, այն էլ միւսնոյն ծաւալով: Մենք այդ չենք պնդում. նիւթը որ մենք առաջարկում ենք, ըստ մեզ, մատչելի է բոլոր մանուկներին, որոնց աչքի առաջ ենք ունեցել. իսկ ծաւալը, անկասկած, տարբեր կը լինի. հայախօս մանուկների համար մեր առաջարկած նիւթը կարող է բաւարար լինել, որպէս մի տարուայ պաշար, իսկ օտարախօսները եթէ մի տարումը ամբողջ նիւթը չանցնեն, մի կարող է մեղադրել մանուկներին կամ նրանց ուսուցչին:

Նիկողայոս Տէր-Ղեւոնդեան

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ



ա	օ	ու
ա	օ	ու
ա	օ	ու
ա	օ	ու



այ

այ

այ, այ, այ,
օյ, օյ, օյ,
ույ, ույ, ույ,

այ, այ, այ,
ույ, ույ, ույ,
օյ, օյ, օյ,



էյ

էյ

էյ, էյ. այ, այ. օյ, օյ. ույ, ույ.
էյ-էյ-էյ. այ-այ-այ. օյ-օյ-օյ. ույ-ույ-ույ.



վայ

վայ

վայ, վայ, վայ. վույ, վույ, վույ.
էյ, այ, վայ, վույ, օյ, ույ.

ու *)

ու

ու, ու. ու, ու. օ, օ.
Օու, Մօու, ու, սու. սա, սա.

է, օվ է. սա է. սա օվ է.
այս է. այս ու է. սա է. սա սու է.

*) Սազի ձայնը մանկան վախեցնելիս:



հայ



այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.
 այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.
 այ, ահ. օյ, օհ. էյ, էհ. վայ, վահ.


հ ա յ

հայր



սա. սար. սար. ուր. ուս. սուս.
 ծվ է. սա ծվ է.
 սա հայ է. սա հայր է.
 ծվ էր. սա ծվ էր.
 սա հայ էր. սա հայր էր.

մայր




հայ. հայր. մայր.
 ուս. սուս. սար.

մի մայր



մէկ մայր



մօմ, սար. հար.



մէկ հայ. մէկ հայր. մէկ մայր.



մա-նուկ

Ն
Ա

ծվ է. հայ է, հայր է, մայր է, կին է.

ծվ էր. մի հայ էր, մի հայր էր, մի մայր էր, մի կին էր.

ծվ կա. մէկ հայ կա. մէկ հայր կա. մէկ մայր կա. մէկ կին կա.

ծվ կար. մէկ հայ կար. մէկ հայր կար. մէկ մայր կար.

ունիմ. մայր ունիմ. մէկ մայր ունիմ.

ունիս. հայր ունիս. մէկ հայր ունիս.

ունի. կին ունի. մէկ կին ունի.

նա ունի.

նա ունի մանուկ.

նա ունի մի մանուկ.

նա ունի մի սիրուն մանուկ.

ունէր...

ատում էր...

անում էր...

կարում էր...

մանում էր...

ծիծ

Յ



այծ. ծամ.

ունիմ. այծ ունիմ. ծամ ունիմ. ծիրան ունիմ.

ունիս. ծիծ ունիս. կուրծ ունիս. ծանկ ունիս.

ունի. մի այծ ունի. մի ծամ ունի. մի ծիրան ունի.

ծրծ-մայր

Ր

ծիծ-ծիծը. այծ-այծը. ծամ-ծամը. ծիրան-ծիրանը.

հայ-հայր. հայր-հայրը. մայր-մայրը. կին-կինը.

ծրծում է.

մանուկը ծրծում է.

մանուկը ծրծում է ծիծ.


մանուկը ծիծ է ծրծում.

այս մանուկը ծիծ է ծրծում.

այս մանուկը ծրծում է մօր ծիծը.

այն մանուկը ծրծում է ծրծ-մօր ծիծը.

ՀՕՀ



հն. չէ.

օվ. ինչ.

Սա օվ է:

Սա մի մանուկ է:

Սա մի չար մանուկ է:




Մանուկը ինչ է անում:

Մանուկը չօչ է անում:

Մանուկը ինչ էր անում:

Մանուկը չօչ էր անում:

Երկու մարդ



սանդ.

վարդ.

սարդ.


Այս մարդը իմ հայրն է:—Սա իմ հայրն է:—
Հայրըս է:

Այդ կինը իմ մայրն էր:—Դա իմ մայրն էր:—
Մայրըս էր:

Այն մանուկը իմ ընկերն էր:—Նա իմ ընկերն
էր:—Ընկերս էր:



գիր



գիր—կիր. գար—կար. սագ—սար. սուգ—սուր.
գարի. գրիչ. կարագ. ուրագ. գարուն. Գարօ.

Կարդում է.

Մանուկը կարդում է.

Մանուկը կարդում է գիր.

Այս մանուկը կարդում է գիր:

Այս մանուկը գիր է կարդում:

Ես, դու, նա.

Մա, դա, նա.

Այս, այդ, այն:


Ես եմ. ես մանուկ եմ:

Դու ես. դու մարդ ես:

Նա է. նա կին է:





պապ



պապ. պանիր. կապիկ.

29377-67

տատ




Երկու արտուտ






տուն



կատու



Թ օ ո ռ



Թի

Թ ա Թ

Թ ա ո

դար, դառ. սար, սառ. բռս — ոռս.
դառ — դառը. նառ — նառը. գառ — գառը.
ծանրը դառը. ԹըԹու նառը. կարմիր գառը.

պապ, պապիկ. տատ, տատիկ. մայր, մայրիկ. հայր, հայրիկ.
ծեր, ծերուկ. հորթ, հորթուկ. գառն, գառնուկ. ծառ, ծառուկ.


ո կարգան օ

գրած է Թու, մոմ, հոր, հորթ, հով, սով.
կարգան՝ Թու, մոմ, հոր, հորթ, հով, սով.

լ կարգան փ

գրած է՝ հաւ, նաւ, Թեւ, սեւ, Թիւ.
կարգան՝ հավ, նավ, Թեւ, սեւ, Թիւ.

փատ, դաւ. փան, նաւ. փահ, հաւ, կով, կաւ. հով, հաւ.



Վատան մըսին չըհասաւ,
Այսօր հօ պասէ, ասաւ.

Ի՞նչ է նկարած այս պատկերի վրա.
Ի՞նչպիսի կատու է նկարած.
Ի՞նչ է անում կատուն.
Ի՞նչ ասաւն կատուն:



շումն



հաց



հաց, հացը, նոր հացը.
 շուն, շանը, շար շանը:
 Մանուկը ուտում էր հացը:
 Ջուներ մօտ գնաց մանուկին:
 Ջուներ ի՛նչ արաւ մանուկին:

սպիտակ, սեւ, անուշ, դառը.
 կծու, թթու, կանաչ, կարմիր.
 սպիտակ շաշան. սեւ հաց.
 անուշ ծիրան. դառը նուշ.
 կծու պանիր, թթու մածուկ.
 կանաչ տերեւ, կարմիր վարդ:

Յականը գնում է.
 Յականը գնում է տուն.
 Յականը այսօր գնում է տուն.
 Յականը այսօր ուշ է գնում տուն:

Միմոնը գնաց.
 Միմոնը գնաց դպրոց.
 Միմոնը երեկ գնաց դպրոց.
 Միմոնը երեկ շուտ գնաց դպրոց:

Հայրս կըմնա.
 Հայրըս կըմնայ այգիում:
 Հայրըս էգուց կըմնա այգիում:
 Հայրըս էգուց երկար կըմնա այգիում:

Անուշն ուտում է.
 Անուշն ուտում է ծիրան:
 Անուշն ուտում է ա-
 նուշ ծիրան:
 Շուշանը պոկում է.
 Շուշանը պոկում է
 շաշան.
 Շուշանը պոկում է
 սիպտակ շաշան:



Այս մանուկը ուտում էր.
 Այս մանուկը ուտում էր հաց.
 Այս մանուկը ուտում էր սեւ հաց:
 Այդ մանուկը կոտորում էր դառը նուշ:
 Այն մանուկը վերցնում էր կարմիր վարդ:

Անուշի շանը



Անուշը կանչեց իր շանը,
Անուշը ցույց տուեց շանը
մի նամակ,

Անուշը ասեց.
«Ապա, սիրուն շնիկ,
դու կարդա,
ես տեսնեմ՝
ինչ է գրած այս
նամակում:

Շանը հոտոտեց նամակը,
շանը նայեց Անուշի երեսին,
շանը ասեց.

Ես գիր չեմ կարդում.
Ես միայն պահպանում եմ հօրըդ տունը:

Անուշի շանը

Անուշը կանչեց իր շանը, ցույց տուեց մի
նամակ եւ ասեց. «Ապա, սիրուն շնիկ, կարդա,
տեսնեմ՝ ինչ է գրած այս նամակում»:

Շանը հոտոտեց նամակը, նայեց Անուշի
երեսին եւ ասեց. Ես գիր չեմ կարդում. Ես միայն
պահպանում եմ հօրըդ տունը:

Անուշը ի՞նչ արեց:
Անուշը կանչեց.
Անուշը ցույց տուեց,
Անուշն ասեց:

Անուշն ս.ւ.մ կանչեց:
Անուշը կանչեց շանը:
Անուշը ս.ւ.մ շանը կանչեց:
Անուշը կանչեց իր շանը:

Անուշը ի՞նչ ցույց տուեց:
Անուշը ցույց տուեց մի նամակ:

Անուշն ի՞նչ ասեց:
Անուշն ասեց՝
ապա, սիրուն շնիկ,
դու կարդա,
ես տեսնեմ՝
ինչ է գրած այս նամակում:

Շանը ի՞նչ արեց:
Շանը հոտոտեց.
շանը նայեց.
շանը ասեց:

Շանը ի՞նչ հոտոտեց:
Շանը հոտոտեց նամակը:

Շանը ինչի՞ն նայեց:
Շանը նայեց երեսին:

Շանը ս.ւ.մ երեսին նայեց:
Շանը նայեց Անուշի երեսին:

Շանը ի՞նչ ասեց:
Շանը ասեց՝
Ես գիր չեմ կարդում.
Ես միայն պահպանում եմ հօրըդ տունը:

երեք տղա




մէկ տղա. երկու տղա. երեք տղա.
այս տղան. այդ տղան. այն տղան.
իմ տղան. քու տղան. նրա տղան.

ես—մենք. դու—դուք. ինքը—իրանք.
սա—սրանք. դա—դրանք. նա—նրանք.
մենք ունինք. դուք ունիք. իրանք ունին.
սրանք ունին. դրանք ունին. նրանք ունին.

Մենք գնում ենք (սօւր) տուն, դպրոց, դաշտ:
Դուք գնում էք (ի՞նչ) գիրք, քանոն, թանաք:
Մենք գնացինք տուն, դպրոց, դաշտ:
Դուք գնեցիք մատիտ, տետրակ, զրիչ:
Նրանք կըգնան.
Նրանք կըգնեն.


խաղ



երեք տղա խաղում են.
երեք տղա խաղ-են-անում.
մենք աղում ենք ցորենը.
դուք աղում էք միսը.
Նրանք աղացին ցորենը.
Նրանք աղեցին միսը.
Նրանք աղ արին մսին. նրանք աղ դրին վարունգը:

միս, մսի, մսին, մսից, մսով, մսում.
պանիր, պանրի, պանրին, պանրից, պանրով, պանրում:

հոլ



երեք տղա խաղում են հոլ.
հոլի խաղալ, վէզի խաղալ, տիկնիկի խաղալ.
զործել, զործ անել. խօսել, խօսք ասել.
պարել, պար գալ, պար ածել. ման գալ, ման ածել.
պտրտել, պտուտ գալ, պտուտ տալ, պտրտացնել:



Կատուին խաղ է, մրկանը մահ է.




Կատուն մտաւ հացի տաշտը եւ նրա մէջ կուտապ-եկաւ, պառկեց: Մկները պանիր կարծեցին նրան. մէկ-մէկ մօտ էին դալիս տաշտին. կատուն էլ թախք մէկնում էր, կախում էր նրանց ու խեղդում:

Մայր-մուկը հասկացաւ վտանգը. նա մօտեցաւ տաշտին ու նայեց պանրին: Ի՞նչ պանիր. չար կատուն էր տաշտի մէջ: Մայր-մուկը գնաց, իմաց արեց ամենքին:

տաշտ, դաշտ. կուտապ—պիրօգ. կուտապ եկաւ—կուտապի պէս կրծկուեց, ծալուեց:



Օ ու



սիպտակ ձու. կարմիր ձու. դեղին ձու. կապուտ ձու.
կարմիր ձի. սեւ ձի. դեղին ձի, չալ ձի, գորշ ձի.
սեւ օձ, չալ օձ. գորշ օձ. շէկ օձ. կանաչ օձ.
մէկ տանձ, երկու տանձ, երեք տանձ, չորս տանձ.
առաջին, երկրորդ. երրորդ, չորրորդ ձուկը.
մեր ձիու սանձը. ձեր ծառի տանձը. նրանց ձեռի գանձը.


զատիկ



Չատիկ էր. երեկոյեան զանգը տաին. մանուկները հաւաքուել էին եկեղեցու դուռը. ամեն մի երեխա ձեռին ներկած ձու ունէր. ձուի էին խաղում. ում ձուն կոտորուամ էր, նա տանուլ էր տալիս. ում ձուն սաղ էր մնում, նա տանում էր:

ո կարգւ փօ

օր, որ, օղ, ող, օձ, որձ. ողնի, ոսկի, Ոսկան.



Ողնին եւ Օձը

Օձը տեղ էր ընտրել ծառի խոռոչում.
օձը նընջում էր խոռոչի մէջ:
Ծառին մօտիկ ապրում էր մի ողնի:
Մի մարդ ուզեց սպանել ողնուն:

Ողնին խնդրեց օձին:

Օձը ներս ընդունեց ողնուն:

Մարդը հեռացաւ:

Օձը ասեց ողնուն.

ընկեր, տեղըս նեղ է.

ասեղներդ ծակոտում են ինձ.

դուրս գնա այս տեղից:

Ողնին զայրացաւ.

ողնին ասեց.

դու համարձակում ես.

հիմա ես քեզ ցույց կը տամ:

Օձը հասկացաւ ողնու շար միտքը.

օձը ինքը դուրս գնաց խոռոչից:

Օձը տեղ էր ընտրել ծառի խոռոչում եւ նրա մէջ նընջում էր: Ծառին մօտիկ ապրում էր մի ողնի: Մի մարդ ուզեց սպանել ողնուն: Ողնին խնդրեց օձին: Օձը ներս ընդունեց ողնուն: Մարդը հեռացաւ: Օձը ասեց ողնուն. ընկեր, տեղըս նեղ է. ասեղներդ ծակում են ինձ. դուրս գնա այս-տեղից: Ողնին զայրացաւ եւ ասեց. դու համարձակում ես. հիմա ես քեզ ցույց կը տամ: Օձը հասկացաւ ողնու շար միտքը. ինքը դուրս սողաց խոռոչից:


օձ, օձի, օձին, օձից, օձով, օձում.

ողնի, ողնու, ողնուն, ողնուց, ողնիով, ողնիում.

ընտրում եմ, ընտրեցի, ընտրել եմ. ընտրել էր.



աղջիկ



մէկ, երկու, երեք աղջիկ հովանոցի տակ.
առաջին, երկրորդ, երրորդ աղջիկը...
սիրուն, տղեղ, ուրախ աղջիկը...
իմ, քո, մեր, ձեր, նրանց աղջիկը...

Երեք աղջիկ գալիս էին գպրոցից: Վատ
եղանակ էր. անձրեւ էր գալիս: Աղջիկներից մինը
հովանոց ունէր, շատ մեծ հովանոց: Մանուկները
մտան հովանոցի տակ եւ ուրախ-ուրախ առաջ
գնացին դէպի տուն:

Արեւ, արեւ, եկ, եկ,
Կարմիր արեւ, դուրս եկ,
Զիզի քարին ախալի արա,
Մեր ոչխարին մըտիկ արա,
Որ գայլը գա, իմաց արա:

որ ես գամ, որ դու գաս, որ գայլը գա:
որ մենք գանք, որ դուք գաք, որ նրանք գան:


Մ ե դ ու

Հն, ծագեցաւ արեգակը,
Հն, ծագեցաւ մանիշակը.
Մեղուն թողեց իր տնակը
Տըզարգալով, արգարգալով:

Մեղուն թըռաւ ծագիէ ծագիկ,
Մեղը առաւ քաղցր, անուշիկ.
Մումը տարաւ հոտոտ, լուսիկ
Պըզպըզալով, պըզպըզալով:



հարս III փեսա




պապ. տատ. հայր. մայր. տղա. աղջիկ. հարս, փեսա.

Խնամախօս


- „Եկել եմ, եկել, այ խնամի“:
- Ի՞նչ ես եկել, այ խնամի:
- „Աղջիկդ ուզել, այ խնամի“:
- Աղջիկ չունիմ, այ խնամի:
- Ես տեսել եմ, այ խնամի“:
- Ո՞րտեղ ես տեսել, այ խնամի:
- „Խանի այգում, այ խնամի“:
- Ի՞նչ էր անում, այ խնամի:
- „Գլուխ էր կոկում, այ խնամի“:
- Ո՞նց էր կոկում, այ խնամի:
- „Հայրով, սանրով, այ խնամի“:
- Հայլին ո՞նցն էր, այ խնամի:
- „Հայլին հայրեվարի էր,
Սանրը սանրավարի էր:“

ճօճ



Մանուկը քնած է ճօճի մէջ. մանուկի ճակատը բաց է. ճանճերը կծում են երեխային: Երեխայի ճակատը ծածկում են խասով:

Փայտօն



Ճօճի մօտ դրած է մի ֆայտօն—փոքրիկ, մանկական ֆայտօն: Մանուկը կրզարթնի. նրան կրղնեն ֆայտօնի մէջ, կարմիր ֆէսը կրծածկեն զլխին եւ փայտօնը կրքաշեն դէպի տուն:



Փոքրիկ ճանճ եմ զուարճասէր,
Միշտ թռչում եմ վար ու վեր,
Մի հով տան մէջ, մի բակում,
Սաստիկ արեւի տաքում.
Ես ներկայով բաւական,
Միտք չեմ բերում ապագան:

Վ ա տ ու

Վատուն եկաւ, փխսիկ, փխսիկ,
 Հազար նազով, ինչպէս հարսիկ.
 Դունչը սրբեց թաթիկներով,
 Մազը սանրեց չանչիկներով:
 — Վատն, կատն, էր ես տրտում.
 Թէ՞ մըկներն են այսօր արթուն:
 Վատուն ասաց միած, միած.
 Այսինքն թէ՛ այն, այն:

V v V v V v V v V v V v V v V v

V v V v V v V v V v V v V v V v


V v V v V v V v V v V v V v V v

L կարդա **ոլ**

իւղ—իուղ, հիւր, ալիւր, աղբիւր, արիւն, առիւծ...

ել գրիր **լլ**

արել—արել, տերել, բարել, անձրել, պարզել...



Առիւծն ու մուկը

Մուկը բուն էր շինել առիւծի որջի մօտ
 և նրա մէջ ապրում էր: Այդ բանը դուր չէր գալիս
 առիւծին. նա ուզում էր միանը ջարդել:

— Ինձ մի ջարդիր, տէր, թող ապրեմ քեզ
 մօտ. ձեռքիցս եկած լաւութիւնը կանեմ քեզ,
 ասում է մուկը:

Առիւծը ժպտում է. ի՛նչ լաւութիւն կարող
 է անել ինձ այս ողորմելին, մտածում է նա:

Մարդիկ թակարդ են սարքում և առիւծին բռնում են: Թակարդի հաստ թոկերը պինդ սեղմում են նրան: Առիւծն սկսում է մոնչալ: Մուկը լսում է առիւծի մոնչոցը, մօտ է վազում, իւր սուր ատամներով կռծոտում-կտրատում է թոկերը և ազատում է առիւծին:

մուկը-մուկն. մկան բունը. մկանը ջարդել.
 առիւծ. առիւծի որջը. դուր չէր գալիս առիւծին.
 կռծել, կռծոտել. կտրել, կտրատել. պոկել, պոկոտել.

խ առխ Ճ, աղբխր, երա, սրբա ն.

աղբր, երախա, խր, Գրբա ն, բրբ.

Չ ռ ռ Չ, Զ Զապրոյ, Զապրե, Զօր.

Ճ փ ք պ կոպ, փպոյ, քաք, քան.

քոյ, պաա, կաք, պաներ, պապ.

Չ թ Մ Լ Կապրանե Բանա Լ.

Օջի կճաճր կր ապաաաա Մակա ն.

Քր ապաաաայ յեյրի կճաճր.

Մոյրան իր քանին քրու չի ապի.

1. Առարկայի մէկը և շատը

մէկ, երկու, երեք ծառ—ծառեր.

մէկ, երկու, երեք մոմ—մոմեր.

մէկ, երկու, երեք ձի—ձիեր.


մէկ, երկու, երեք սեխ—սեխեր.

մէկ պապ. մէկ պապ էր. շատ պապեր.

մէկ տատ. մէկ տատ էր. շատ տատեր.

մէկ հաց. մէկ հաց էր. շատ հացեր.

մէկ ձու. մէկ ձու էր. շատ ձուեր.




Ս ա գ ե ր

Ջո՛ւ-Ջո՛ւ, շատակեր
սե ու սպիտակ իմ ձագեր
հերինք որչափ լողացիք,
կարմիր տօտեր լրացիք

հերիք, որչափ գետի մօտ
որդեր կերաք դուք տղմոտ,
գնանք-գնանք դէպի տուն,
ձեզ կուտ կըտամ իրիկուն:

2. Առարկայի մէկը և շատը

շուն, շուն էր, շուներ—շ'ներ.
տուն, տուն էր, տուներ—տ'ներ.
ձուկը, ձուկն էր, ձուկներ—ձ'կներ.
դուռն, դուռն էր, դուռներ—դ'ներ.



Ազան շունը

Կամուրջի տակից պարզ ջուր էր վազում:
Մի շուն անցնում էր կամուրջով: Ըստնը բերանին

մի կտոր միս ունէր: Վերևից նայեց ջրին: Ջրի
մէջ տեսաւ մի ուրիշ շուն. սա էլ բերանին միս
ունէր: Ըստնը ցած թռաւ կարմուրջից, ուզեց միւս
շանից խլել մսի կտորը: Բայց ջրի մէջ նա ուրիշ
շուն չըգտաւ. իրան բերանի կտորն էլ վեր
զցեց, ջուրը տարաւ: Ըստնը իւր պատկերն էր
տեսել ջրի մէջ: Աչկածակ էր մեր շունը և պա-
տիժն էլ առաւ:

3. առարկայի մէկը և շատը


մէկ շուշան, մէկ շուշան էր, շատ շուշաններ.
մէկ դանակ, մէկ դանակ էր. շատ դանակներ.
մէկ մկրատ, մէկ մկրատ էր. շատ մկրատներ.
մէկ դպրոց, մէկ դպրոց էր. շատ դպրոցներ.
մէկ աշակերտ, մէկ աշակերտ էր. շատ աշակերտներ:

Հան ու ցինը

Հաւր ձագերն առաւ և գնաց աղբանոցը
բրջուջ անելու: Այդ ժամին ցինը ման էր տալիս
օդի մէջ: Մայրը տեսաւ ցինին և ձայն տուեց
ձագուկներին.

Ղն-Ղն, Ղն-Ղն, իմ ձագուկներ.
լաւ վառիկներ, աքլարիկներ.

եկէք, մըտէք թեիս տակը,
 շատ հեռու է հայր-որձակը.
 Հար ուրուրը ման է տալիս,
 ճյ-ճյ, սնց է պտուտ զալիս:



Չագերը հասկացան, որ վտանգ կա, վագե-
 ցին, մտան մօր թեի տակ: Բայց մի ձագուկ
 ականջ չարեց մօր ձայնին: Յինը վրա-տուեց, ճան-
 կերի մէջ առաւ նրան և տարաւ, անուշ արաւ:

գնաց քջուջ անելու—գնաց որ քջուջ անի.
 ման-տալ. ման եմ տալիս. ման էի տալիս.
 ման-գալ. ման եմ գալիս. ման էի գալիս.
 պտուտ-գալ. պտուտ եմ գալիս. պտուտ էի գալիս.
 պտուտ-տալ. պտուտ եմ տալիս, պտուտ էի տալիս.
 վրա-տալ. վրա եմ տալիս, վրա-տուեց ձագին.
 ճանկ եր. ձագ եր. ձագուկն եր. վառիկն եր...

4. առարկայի մէկը և շատը

մի մատանի, շատ մատանիք, շատ մատանին եր.
 մի աղաւնի, շատ աղաւնիք, շատ աղաւնին եր.
 մի քահանա, շատ քահանայք, շատ քահանան եր.
 մի երեխա, շատ երեխայք, շատ երեխան եր.

Կաղնի ծառը և եղէգը

Անտառի մօտ մենակ կանգնած էր մի հսկա
 կաղնի: Ծառին մօտիկ դուրս էր եկած մի հա-



մեծ տ եղէգնի: Կաղնի ծառը շարունակ ծաղ-
 րում էր եղէգնուն. դու անգօր ես, ասում էր.
 քամին քեզ կուացնում, զեանին է կպցնում. իսկ
 ես միշտ կանգնած եմ ուղիղ և քամուց չեմ վա-
 խենում:

Մի օր էլ սաստիկ քամի վեր-կացաւ: Եղէգնին

ծալուեց, գետնիցը կպաւ. իսկ կաղնին արմատից պոկուեց, վայր-ընկաւ: Քամին անց-կացաւ: Եղէգնին նորից կանգնեց, նայեց կաղնուն ու ասեց. «Ով հպարտանա, նա թող չքանա»:

կանգնած էր

Խնչը. մի կաղնի կանգնած էր.

Խնչպիսի. մի հսկա կաղնի կանգնած էր.

ճրտեղ. անտառի մօտ մի հսկա կաղնի կանգնած էր.

Խնչպէս. անտառի մօտ մեծակ կանգնած էր մի հսկա կաղնի:

գուրս էր եկած.

Խնչը. գուրս էր եկած մի եղէգնի.

Խնչպիսի. գուրս էր եկած մի համեստ եղէգնի.

ճրտեղ. ծառին մօտիկ գուրս էր եկած մի համեստ եղէգնի.

ծաղրում էր.

Խնչը. ծառը ծաղրում էր.

ճր ծառը. կաղնի ծառը ծաղրում էր.

Խնչպէս. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր.


Խնչին. կաղնի ծառը շարունակ ծաղրում էր եղէգնուն. *).

կաղնի, կաղնու, կաղնուն, կաղնուց. կաղնիք-կաղնիներ. եղէգնի, եղէգնու, եղէգնուն, եղէգնուց. եղէգնիք-եղէգնիներ. քամի, քամու, քամուն, քամուց... քամիք-քամիներ.

*) Այսպէս հարցերով վերլուծել բոլոր նախադասութիւնները. հարցերը տալ ընդարձակ և պատասխանները պահանջել լիակատար և ոչ հատիկ-հատիկ բառերով:



յօպօպ



հարկ-տուրք, պէտք.
յարկ-կտուր, ծածկ.
հարթ-տափակ, տափարակ.
յարդ-ժղօտ, դարման.

համր-խուլ, ականջը
ժանր.
յամր-դանդաղ, կամաց
համար-բանի համար,
մէկի համար.
յամառ-կամակոր, իր
ասածի մարդ.

Յ օ պ օ պ ը

Յօպօպը ձու պիտի ամէր, որ ձագեր հանէր,
բայց բուն շինել չըզիտէր: Նա մի պատրաստի
բուն գտաւ, ձու ամեց, որ թուխս նստի: Միւս
օրը յօպօպն զգաց, որ բունը հոտում է. գնաց,
ուրիշ բուն գտաւ: Զատ շանցած, այդ բնից էլ
սկսեց վատ հոտ գալ:

—Այս տեղի թռչունները, երևի, հոտած են,
ասաց յօպօպը. թռչեմ-գնամ ուրիշ աշխարհ:

—Գնա՛, ասաց ազուաւր. բայց աշխատիր
բնութիւնդ փոխել, ոչ թէ բունդ. կեղտահոտը
նրանից է, որ դու մաքրասէր չես:

ձու ածել՝ հաւը ձու է ածում.
ջուր ածել, թէյ ածել, սուրճ ածել.
փող ածել, սրինգ ածել, դաշնակ ածել.
հանել, որ հանէ, որ հանէր.
նստիլ, որ նստի, որ նստէր.

Չայնաւոր տառեր՝ ա, օ, ու, է, ի, ը, ե, իւ, եօ,
կիսաձայն տառ յ՝ —այ, էյ, օյ, վայ, թէյ.
» » հայր, մայր, եղբայր.
» » քույր-քոյր, ծոյլ, բոյն,
Բաղաձայն յ՝ յարկ, յիսուն, յետոյ.
Անձայն յ՝ ծառայ, քահանայ, երեկոյ.

ու — իւ — ուէ — ուե — ուա

այլւր. արիւն. աղբիւր. աղուէս. պատուէր. արուեստ.
ստուեր. առուակ.

Ես շատ եմ սիրում, երբ ձիւն է գալիս, տաք հագ-
նըւում եմ, բազն եմ վազ տալիս, ընկերներին հետ ձնա-
գունտ խաղում, ազատ թռչկոտում, խնդում, ծիծաղում.
բայց, ան, աշխարհում կան բիւր մանուկներ, որոնք բո-
բիկ են, չունին տաք շորեր:



Ա զ ու է ս ը

Աղուէսը պառկեց աղբի տակին,
Աչքը դցեց հաւի ձագին,
Նետով կրտամ աչքի տակին,
Որ մօտ չըդայ նա մեր բազին:

եա. եօ.

հողի — հողեակ. որդի — որդեակ. աղանեակ, եօթնեակ...

Արուսեակը շատ աշխատասէր աղջիկ էր. իրանց դա-
սատանը նա ունէր եօթն ընկերուհի. նրանց անուններն
էին՝ Սրբուհի Մամիկոնեան, Սաթենիկ Արամեան, Վար-
դուհի Պարոնեան, Պերճանուշ Պուշեան, Մանուշակ Պատ-
կանեան, Սիրանոյշ Աղայեան, Լուսիկ Արծրուհի: Իսկ
Արուսեակի ազգանունը Ղևոնդեան էր:

ԱՄԲՈՂՁ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, յ, լա, ժ, կ, հ, ճ, դ, ճ, մ, յ, ն, շ, ո, շ աք, ջ, ո, ս, վ, ա, բ, ց, է, փ, ք, ա, օ, ֆ.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Զ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Բ, Յ, Ի, Փ, Բ, Օ, Ֆ.

Ամբողջ այբուբենը.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. յ. լ. ա. լ. կ. ջ.

դ. ե. լ. յ. ն. շ. ո. շ. ա. ք. ջ. ք. յ. է.

փ. ք. ա. օ. ֆ.

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Զ.


Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Զ. Պ. Զ. Ռ. Ս. Վ. Տ. Բ. Յ. Ի.

Փ. Բ. Օ. Ֆ.


Փ. Ռ. Օ. Ֆ.

Բառ. խօսք.

բառ՝ հաց. ջուր. գիրք. հող. մատիտ. տիկնիկ...
խօսք՝ հացը ուտելիք է. ջուրը խմելիք է.
հողը խաղալիք է. գիրքը գասի առարկայ է.
մատիտը... տիկնիկը... սուրճը... փլաւը...




աշակերտ. ուսուցիչ. դերձակ.
երկրագործ.
Աշակերտը կարդում է. ուսուցիչը
կարդացնում է:
Դերձակը կարում է. երկրագործը
վարում է:




կով. ձի. շուն. կատու.
առիւծ:
Կովը բառաչում է. առիւ-
ծը մոնչում է:
Ձին խրխրնջում է. շունը
հաջում է:
Կատուն մլաւում է. աքա-
ղաղը կանչում է:

Ա ք ա ղ ա ղ



Դու ինձ ասո՛ս, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիրմիրաքիդ մատաղ,
Ինչի՞ ես շուտարթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Անուշ քունս խանգարում:



ոչխար. առիւծ. ստիակ, խոզ.
 ոչխարը խոտակեր կենդանի է.
 առիւծը մսակեր զազան է.
 խոզը ամենակեր կենդանի է.



Գայլը և զառը

Սարի լանջով առուակ էր վազում: Գառը մօտեցաւ, որ ջուր խմէ: Գայլը տեսաւ վերեւից և ձայն տուաւ. «էյ, դու, ի՞նչու ես ջուրս պըղտորում»:

— Ես ներքին եմ կանգնած, տէր իմ, իսկ դու վերին ես. ի՞նչպէս կարող եմ ջուրդ պղտորել:

«Ուրեմն ես սուտ եմ ասում, բարկացաւ գայլը. անպիտան, դու համարձակում ես ինձ հակաձառել», ասաց զազանը և պատառօտեց գառնուկին:



Երկու առարկայ մի խօսքի մէջ.

Հովտում կանգնած էր մի տանձի ծառ:
 Ծառի վրա կային պտուղներ:
 Ծառի տակ նստած էր հովիւր:
 Գառների մօտ նստած էր շունը:
 Ծառի շուրջը արածում էին գառները:
 Ծառի վերևը թռչոտում էին թռչունները:
 Ոստի վրա նստած էր մի ազուաւ:

և—ու

Ես գնում եմ դպրոց:
 Դու գնում ես դպրոց:
 Ես և դու գնում ենք դպրոց:
 Ես ու դու գնում ենք դպրոց:

Գառնուկ

Իմ սիրուն գառնուկ,
 իմ անմեղ գառնուկ,
 բուրդը սպիտակ է,
 բուրդըդ փափուկ է.
 դու դաշտ ես վազում.
 դու արօտ ես վազում.
 մօրըդ կարօտն ես քաշում:
 Միրական գառնուկ,
 լաց մի լինիր փոքրիկ սղի նման.
 մայրըդ կըգայ,
 քեզ համար անուշ կաթ շատ կըբերէ:


Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
 Բուրդըդ սպիտակ ու փափուկ,
 Գաշտ վազելով ու արօտ,
 Մօրըդ քաշում ես կարօտ:
 Մի լար, գառնուկ սիրական,
 Փոքրիկ սղի դու նման.
 Կըգայ մայրըդ, հետը շատ
 Կըբերէ քեզ անուշ կաթ:

Իսկ. բայց

Վարդանը գնում է, իսկ Շուշանիկը գալիս է:
 Հայկը գրում է, իսկ Հայկանուշը կարում է:
 Ծառը ծաղկում է, բայց պտուղ չի տալիս:
 Արմիկը նկարում է, բայց վատ է նկարում:

Թէ-եթէ

Կատուն մեռաւ, ափսոս ու սխ,
 Մկներն այսօր խիստ են ուրախ.
 Եթէ յանկարծ վեր-կենայ սաղ,
 Նրանց կանէ արիւն-շողախ:



Վատ ընկերը

Էշն ու շունը ճամասարն էին գնում:
 Մի խօտաւէտ տեղ կանգնեցին:
 Էշն սկսեց արածել խօտը,
 շունը ուտելու բան չունէր:

— «Խուրճինդ լիքն է հացով. մի կտոր ինձ տուր, ինդրեց շունը. սոված մեռնում եմ:»

— «Չեմ տալ. ես խոտ եմ ուտում, դու էլ խոտ կեր, պատասխանեց էջը:»

— «Ես խոտակեր չեմ, ընկեր. հաց եմ ուզում:»

— «Չեմ տալ, կրկնեց էջը:»


Այդ միջոցին թփերի ետևից երևեցաւ գայլը, էջի թշնամին:

էջը վարհուրեց. «Ճնկերս, աղաչեց նա. ան, քեզ լինի բոլոր հացը, կեր, անուշ արան. միայն թէ ազատիր ինձ գայլի ատամներից:»

Չունը երեսը շուռ տուեց և հեռացաւ. «Եթէ իմ ընկերս լինէիր, ես քեզ կը պաշտպանէի», ասաց նա:

Գայլը մի բուլէում պատառոտեց էջին:

արածել — արածացնել. ուտել — ուտացնել.
խոտաւէտ, հոտաւէտ — շատ խոտ տուող. լաւ հոտ տուող.
սոված եմ, ծարաւ եմ — քաղցած եմ. խմել եմ ուզում.



Սոխակը երգող թռչուն է:
Ծիծեռնակը երգող թռչուն է:
Սոխակը և ծիծեռնակը երգող
թռչուններ են:



Մ ե Ր Թ Ո Ւ Ն Ր

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի և մի խոհանոց: Սենեակներից մէկում մենք դաս ենք սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք. նրա մէջ դարձած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի պահարան: Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք: Դա կոչւում է ննջարան:

Պատմեցէք, ինչ որ տեսնում էք մանկանոցում:

Տառը թունիկին

Տօ-տան, տօ-տան՝
Ոտիկները շուռ-շուռ փոխի, բարձ ջան.
Տօ-տան, տօ-տան՝
Տօտիկները ամուր կոխի, լարձ ջան...

Տճ-տան, տճ-տան՝

Արբի, արբի, ինձ ճի արա, քեզ մատաղ.

Տճ-տան, տճ-տան,

Արբի, մօրըդ պաշի արա, քեզ սնգաղ... *)

Տճ-տան, տճ-տան՝

Հըրէս եկաւ իմ բալիկը վագելով,

Օ-խանյ, ճ-խանյ՝

Պաշի արաւ իմ շըրթանքը լիզելով:

Մեր դասատուներ

Դասատան մէջ նստած են աշակերտները: Աշակերտների առաջ նստած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբ-որ վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են: Աշակերտները դասատանը կարդում են, գրում են, հաշոււմ են թւերով, երբեմն էլ նկարում են: Աշակերտների գլխացը գրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ գրած է կաւիճ և սպունգ: Գրատեղանների վրա գրած են դասական առարկաներ:

*) Բալա ջան-ղաւակս. լալա ջան-ժաղիկս. ճի արան — գրկիր. քեզ մատաղ, քեզ սագաղ՝ նոյն նշանակութիւնն ունին:

Հրաւէր

Չանգը տըւին, դէն, շատ արէք,

Խաղալիքներ մի կողմ դրէք.

Մի կողմ դրէք գընդակ, չըւան,


Խաղաախկին, հոյ, խարազան.


Մըտէք, մըտէք դաք դասատուն.

Իսկոյն կըգայ ձեր դասատու-ն:

Մեր ընտանիքը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են: Նրանք մեզ պահում-պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց պատուէրները կատարում ենք:






Պատմեցէք, ինչ որ տեսնում էք այս պատկերի վրայ.

Ազգակիցներ

Ես ունիմ հայր ու մայր, նրանք իմ ծնողներն են:
 Հօրս հայրը իմ պապն է—իմ մեծ հայրը:
 Մօրս մայրը իմ տատն է—իմ մեծ մայրը:
 Հայրս մի եղբայր ունի, նա իմ հէրբարն է,—
 հէրբար-հօրեղբայր:
 Մայրս էլ մի եղբայր ունի, նա իմ քեռին է,—
 քեռի-մօրեղբայր:

Երեկ հօրաքոյրս ու մօրաքոյրս տարան ինձ
 իրանց տուն: Հօրաքոյր-հօրքիւր, մօրաքոյր-մօրքիւր:



Փիղն ու բօթօթը

Քաղաքի փողոցներով ման էին ամուսն մի
 փիղ: Մարդիկ նայելու էին գուրս եկել: Փողրիկ
 շնիկը տեսաւ փղին և սկսեց նրա վրայ հաջել:

— Ի՞նչու ես հաջում, հարցրեց գամփուր. չըլինի թէ ուզում ես վախեցնել փղին:

— Չէ, միտքս այդ չէ. ես հաջում եմ, որ մարդիկ ասեն. «Տեսէ՞ք՝ ինչքան քաջ է մեր քօթօթը, որ փղի դէմ էլ հաջում է»:




Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո. եկեսցէ արքայութիւն Քո. եղիցի կամք Քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազգորդ տնւր մեզ այսօր. թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց սպարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեան զմեզ ի շարէ, զի Քո է արքայութիւն, և՛ զօրութիւն, և՛ փառք այժմ և յաւիտեան:



Ա Ռ Ա Ջ Ի Ն Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն



Դասական պիտոյքներ՝

գիրք, գրիչ, գրչակոթ, գրչածայր, գրչաման, գրչահատ, քարեգրիչ, քարետախտակ, գրատախտակ, կաւիճ, մատիտ, տետրակ, թանաք, թանաքաման:

Խաղաղիքներ՝

վէզ, հոլ, գնդակ, օղակ, չուան, խարազան, չիլիկ, չիլիկափայտ, խաղատիկնիկ—տիկնիկ...

Լուսացաւ, լուսացաւ, լոյսն է բարին, ծիտն է ծառին, հաւն է թառին. անշխատաւոր, վեր կաց բանի, ծոյլ մարդու բունը տանի:

Գիրք, մէջը քաղցր միրգ.
Ինչ-որ գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով, բրիչով:
Մատիտը մատիդ, կօշիկը ոտիդ, ճանապայ երթալիս միշտ լինին մօտիդ:

Հ ու ը կուզէ խարագան, որ պտոյտ գայ անխափան:
 Վ է գ ի կարմիրն է սիրուն, վաստակ է զարկողներուն:
 Օ դ ա կ խաղախն օգտակար շարժմունք է մանկանց համար:

Գ ի ը

Կարգան, այ իմ խելօք մանուկ,
 Կարգան, գրիք դու ամեն օր.
 Կարգացողի խելքն է կտրուկ,
 Միտքը պայծառ ու լուսաւոր:

Առածները սովորելու են գրել

Ով կը կարդայ, նա մարդ ա:
 Ով կ'աշխատի, նա կ'ուտի:
 Ով ալարի, ոչ դալարի:

Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորանկ քնից,
 Արևն արդէն ծագել է.
 Վեր կաց վափուկ քո անկողնից,
 Հաւը վաղուց խօսել է:



Ա շ ա կ եր տ ը

Արամը ծխական դպրոցի աշակերտ էր: Երեկոյին նա պատրաստեց իւր դասերը, գրքերն ու տետրակները դարսեց պայուսակի մէջ և անկողին մտաւ:

Առաւօտեան ժամի եօթն էր: Մայրը մօտ գնաց Արամի անկողնին, մեղմիկ համբուրեց նրա գանգոսը մազերը և կամացուկ խօսեց. «Արամիկ, զաւանկս, վեր կաց, ժամանակ է»:

Մանուկը արագ վեր կացաւ, լուացուեց, հագնուեց, մի բաժակ թէյ խմեց, մի փոքրիկ հացիկ կերաւ և շտապ գնաց ուսումնարան:

Գ ը ի շ


Ի՞նչ կը լինի, ասան, գրիչ,
 Ինձ էլ սիրես գոնէ մի-քիչ.
 Ինչու՞ իմ մեծ քրոջ ձեռին
 Գրում ես միշտ վարժ ու կարգին,
 Իսկ իմ ձեռին խաղաղում ես
 Սև ագռաւի չանկերի պէս:
 Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
 Ե՛կ, խնդրում եմ, ինձ համար էլ
 Գրի՛ր այնպէս արագ-արագ,
 Այնպէս ուղիղ, սիրուն, բարանկ:

Գրիչը լուռ լսում-լսում,
 Ճըռճըռում է ու խաղմրղում,
 Բայց այս անգամ արգէն կարծես
 Փոքրիկ ծախ ճանկերի պէս:

Բացատրեցե՛ք հետևեալ հասկերուհները եւ գրեցե՛ք՝

1. Գըլուխըս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմացրին, լեզուս բացուեցաւ, խօսիլ ըսկաւ:

2. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կը պըտտէր. երբ-որ ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:



Ուտելիք եւ խմելիք

Ի՞նչ ենք ուտում՝ հաց, պանիր, սպաս, փլաւ, չիւրըթմայ, տօլմայ, կոլոլակ, գիշերեփուկ...
 Ի՞նչ ենք խմում՝ ջուր, կաթ, թէյ, սուրճ, գինի, գարեջուր...
 Խմորեղէն ուտելիք՝ բոքոն (բոկեղ), լաւաշ, բաղարջ, կաթ-խմորեղէն ուտելիք՝ բոքոն (բոկեղ), լաւաշ, բաղարջ, կաթ-նահունց, գաթայ, կարկանդակ, կուտապ...
 Կաթնեղէն՝ մածուն, սեր, թան, կարագ, շօր*), իւղ, պանիր...
 Մսեղէն՝ արգանակ — բուլիօն, սպաս — սուպ, խորոված, տապակած...

*) Շօր — Творогъ.

ԱՄԵՆՕՐԵԱՅ ՀԱՅՆ



Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի Քո անունը, գայ Քո թագաւորութիւնը. լինի Քո կամքը ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վերայ. մեր ամենօրեայ հացը տուր մեզ այսօր...

Առածներ՝


Աղ ու հաց, սիրտը բաց:
 Հաց ու պանիր, կեր ու բանիր:
 Մի բաժակ ջուր, ով ուզի տուր:
 Հացի կարածը թուրը չի կարի:

Բարի մարդը

Էրիկը շուկայից տուն էր գալիս: Ճանապարհին նա տեսաւ մի մանուկ, որ աղի-աղի լալիս էր: Մարդը խղճաց որբուկին, առաւ, իւր տուն տարաւ:


Կինն ասաց. այ մարդ, ի՞նչ ես անում. այդ որբն էլ որ մեր տուն մտաւ, մեր հացին աղ չի մնալ:

Մենք էլ հացը առանց աղի կուտենք, պատասխանեց բարի մարդը:



Արլորն ու Մարգարիտը

Օրուան մէկը մի աբլուր,
Քջու ջ-մջու ջ անելիս,
Տեսաւ մի հատ մարգարիտ,
Աղբի մէջը փայլելիս.
Կտցեց, ասաւ՝ էս լ՛նչ է.
Ինձ հարցընես՝ ոչինչ է:
Այ փայը տամ էն մարդին,
Որ գին կըտայ էս գարդին.
Իսկ ինձ համար մի գարին
Արժէ էսպէս հազարին:



Հ ա ց

Մարդուս գլխաւոր ուտելիքը հացն է: Հացը պատրաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մազում են, յետոյ տաք ջրով շաղախում, խմոր են շինում: Խմորը շաղախելիս՝ հետը թրթ-խմոր են խառնում: Թրթ-խմորին ասում են խաշ: Հաղախած խմորը լաւ հունցում են և ծածկում: Հունցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի մէջ՝ գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած խմորը, զնդում է և այդ զնդերից հաց է թխում թոնրի կամ հնոցի մէջ: Հնոցին փուռն են ասում:

Ջ ու ը


Ջուրը մարդիկ շեն պատրաստում. նա այնքան հարկաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ:

Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւր-
ներից և գետերից: Ուր-որ աղբիւր կամ գետ
չըկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրը-
հոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում:
Առանց ջրի մարդս չի կարող ապրել. կենդանի-
ներն էլ կը կոտորուին, եթէ ջուր չըլինի:

Ինչպիսի է առարկան, շրացրէք՝

Մանուկն ուտում է... հաց... գաթայ... բաղաբջ,
մածուն, փլաւ...

Մանուկը խմում է... ջուր... կաթը... թէյ... սուրճ...
Մանուկը գնեց... թուղթ... գրիչ... գրիք... գնդակ...



Ն ա պ ա ս տ ա կ

Մի վագիր այգչափ արագ,
Ի՛մ սիրունիկ նապաստակ,
Շատ պտտիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոգնին:

Քեզ կը բերեմ կաթն ու հաց,
Շաքրեջրով համեմած,

Ուտես, խմես, գորանաս,
Բանից կարօտ չը մնաս:

Ծանր-ծանր կը քայլես,
Սիրաբա վեր-վեր կը հանես.
Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,
Կ'երթաս, ազատ կ'արածես:

Ի՞նչպիսի նապաստակ՝...

Ի՞նչպէս մի վագիր՝...

Ի՞նչպիսի կաթն ու հաց՝...

Ի՞նչպէս կը քայլես՝...

Հանելուկները թացատրեցք եւ գրեցք՝

1. Ճերմակ տակառիկ

Մէջն երկու կերպ ըմպելիք:

2. Օրան-օրան շուռ է գալիս,

Ոտներ չունի, ման է գալիս,

Բերան չունի, կուլ է տալիս:

Կատուի խրատը

Որսի շունը մի նապաստակ էր բռնել: Կա-
տուն տեսաւ և ասաց՝ ի՞նչ անգութն ես. մեղք է,
բաց թող:

Այդ միջոցին մի փոքրիկ մուկը անցաւ նրանց
մօտից: Կատուն վրայ վագեց, բռնեց, խեղդեց:

— Այդ ի՞նչ արիր, ասաց շունը. մեղք գործեցիր, բանեկամ:

— Ոչինչ, պատասխանեց կատուն. իմ խեղճածը մի չնշին մուկն էր միայն:

Ա ն ձ ր և

Ա՛նձրև-անձրև, ցած արի,
Բըսցո՛ւր ցորեն ու գարի,
Բըսցո՛ւր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ՛ փոշի, մաքրէ՛ օդ:

Դու արի. գու բուսցուր կամ...

Դու աւլէ կամ...

Դու մաքրէ կամ...

Դու ի՞նչ բուսցուր...

Ի՞նչպիսի ծաղիկ, ի՞նչպիսի խոտ...

Պատասխանները գրառոր:

Բատից խօսք կազմեցեք՝

Հասցը ուտելիք է:

Հացի կտրածը թուրը չի կտրել:


Աչքդ ուրիշի հացին մի գցիր:

Հացից գուրկ մարդուն արա՛ օգնութիւն:

Հացով առատ լինի սեղանդ:

Հացոտ սննդարար ոյժ կայ:

Այսպէս փոփոխեցէ՛ք՝ առ, ջոռ, պանիր...



Գործիք եւ սարք

Գործ, գործել, գործող, գործի, գործիք՝ գզալ, դանակ,
պատասաքաղ, քորոց, մկրատ, ասեղ...

Երկիր, երկրագործ, երկրագործի գործիք՝ գութան,
արօր, ցաքան, եղան, մանգաղ, գերանդի...

Դերձակի գործիք՝ ասեղ, քորոց, մկրատ, մատնոց,
արդուկ...

Դարբնի գործիք՝ մուրճ, սալ, ունելիք, կռան...

Հիւսնի գործիք՝ ուրագ, կացին, սղոց, դուր...

Սարք՝ կապ, սանձ, երասան, թամբ, ասպանդակ,
խամուժ, փորքաշ...

Հաներոհներ՝

1. Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբ-որ ձայն կրտայ, աշխարհ կը լինդայ:
2. Փթած փայտը փորեցին, առիւծը մէջը թաղեցին:



Ճշմարտախօս Արամը

Հայրը Արամին մի բանի գործիքներ ընծայեց՝ ուրագ, սղոց, դուր, թակ, կացին, մուրճ և այլն: Արամը իրան համար մանրիկ բաներ էր շինում:

Մի օր Արամը մտաւ պարտէզ և կտրեց մի տանձի ծառ, որ հայրը խնամքով պատուաստել էր: Հայրը նկատեց այդ և հարցրեց. «Ո՞վ կը լինի կտրած այդ պատուաստը. ես պիտի իմանամ և սաստիկ պատժեմ յանցաւորին»:

— Ի՛նձ պատժիր, հայրիկ, ես եմ յանցաւորը, ասաց Արամը:

Հօր բարկութիւնն անցաւ: «Դու մեղաւոր ես, Արամ, ասաց Հայրը. բայց որովհետև ճշմարիտ խօսեցիր, ես ներում եմ քեզ: Տես որ միւս անգամ առանց մտածելու գործ չըբռնես»:

Ինչով ինչ են անում

Դանակով կտրում են. ասեղով... ուրագով... սղոցով... արօրով... մանգաղով... զրչով... մատիտով... մկրատով... մուրճով...

Ու լ ե ր

(Հաշուել մեկից մինչև տասը)

Լօրենու տակին մէկ ուլ կար կանգնած,
Մենակ մընացած՝ մըկ-կում էր կամաց.
Այդ ձայնի վըրայ մօտ վագեց միւսը.
Մէկ ուլի տեղակ եղան երկուսը:

Մի ուրիշ ուլիկ երբ նրանց տեսաւ,
Կարծեց՝ կուում են, մօտ վագեց, եկաւ.
Այս մէկի գալով ուլերի թիւը
Երեքի հասաւ:— Ճիշտ է հաշիւը:

Մի չորրորդ ուլիկ, գարմանք էր կ'ասես,
Որտեղից որ էր, պուպուզ, լոյս ընկաւ.
«Ի՞նչ էք երեքով պըռըշկել այդպէս.
Երեքը լաւ չէ. չորս լինինք» — ասաւ:

Մանրիկ այծուկներ չորս շարածձի,
Պօղ-պօղ տըւին, առան մէկ-մէկի.
Թփերի տակից նըրանց չխկոցին
Մինն էլ դուրս վագեց. հինգ եղան կարգին:

Նա որ կենտու էր, նայեց գէպի վեր,
Եւ ժայռի գլխին տեսաւ մի ընկեր.
Այս հօ վեց եղան:— Բա այն խայտոտը...
Նրանով եօթ կանի ուլերի հօտը:

Մինն էլ, տես, ինչպէս թրփի մէջ գաղտուկ
 Արագ կոծում է սասերը փափուկ.
 Սա էլ որ մօտ գայ ուլերի հօտին,
 Բոլորի թիւը կը հասնի ութին:

Իսկ այն ինչ ուլ է միւս կողմը կանգնած,
 Որք արդի նրման, կարծես խըռոված.
 Արի նրբան էլ հաշուի մէջ առնենք,
 Առաջ ութ էին. — իննը թամամենք:

Ահա գալիս է և սէիզ էծը,
 Երկար մօրուքով, ամենից մեծը.
 Նա հպարտ-հպարտ ուլերն ականեց.
 «Ինն են ձագերըս, ինձնով՝ տասն», ասեց:

Սէիզ սպէրը գէպի տուն գընաց,
 Բոլոր ուլերը իւր ետեն արած:


Ն՞որք է լինում

Ձիւնը հալում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում,
 օրը երկարում: — Այս երբ է լինում:

Ձգալի կերպով շոգը սաստկացաւ. օրը երկարեց, խոտը
 հընձուեցաւ. արտերը հասել, մանգաղ են կանչում: — Ասացէք,
 տեսնեմ, այս երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին. օրը կարճա-
 ցաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափ-
 ւում և մութ գիշերը չորս կողմից բռնում: — Ասացէք, խըն-
 դրեմ, այս երբ է լինում:

Գաշտ ու ձոր, տեսէք, ձիւնով ծածկուեցին. ծառերից
 սառցէ շիթեր կախուեցին. մարդիկ ներս մտան իրանց
 տները, իսկ գազանները — իրանց բները. դուրսը — օյ, օյ, օյ —
 քամի է փչում և ձիւնի փոշին աչքերդ լցնում: — Գրե-
 ցէք, խնդրեմ, այս երբ է լինում:



Ա Ր Պ Ո Ւ Պ Ը

Արտուտը բուն էր շինել ցո-
 րենի արտում և ձագեր էր հանել:
 Մի օր արտի տէրը եկաւ արտը,
 մի հասկ պոկեց, տրորեց ափի մէջ և
 ասեց որդուն. արտը հասել է, սրդի.
 գնա, խօսիր մեր զրացիներին,
 թող գան, արտը միասին հնձենք:

Արտուտը մտածեց. քանի որ մար-
 դու յոյսը զրացիների վրայ է, ես
 կարող եմ հանգիստ ապրել այստեղ:

Երկրորդ անգամ արտի տէրն եկաւ, նայեց
 հասկերին և ասաց որդուն. զրացիները չ'եկան.
 գնա, որդի, մեր բարեկամներին կանչիր:

Արտուտն ասաց ձագերին. Հանգիստ կացէք
 ձեր տեղը. արտը շուտով չի հնձուիլ:

Երրորդ անգամ արտի տէրն եկաւ, արտին
 նայեց և ասաց. սրդի, արտը կծղել է. ուրիշների
 վրայ յոյս գնելուց բան չի դուրս գալիս. վաղը
 վերցրու մանգաղդ և եկ, արտը հնձենք ես և դու:

Արտուար մտածեց, այժմ հաւատում եմ, որ արտը կրհնձուի: Եւ ձագերն առաւ ու հեռացաւ ուրիշ տեղ:



Կարասիք եւ ամսաններ

Կարասիք՝ սեղան, աթոռ, բազկաթոռ, գահաւորակ, ընկողմարան, օրօրոց, մանճակալ...

Ամաններ՝ կուժ, կուլայ, կճուճ, կարաս, բաժակ, գաւաթ, ափսէ...

Առածներ՝

1. Այ կուժ, բեզ ասեմ, այ կուլայ, դու իմացիր:
2. Մի բաժակ ջուր, ով ուղի տուր:

Ա թ ո ռ

Աթոռը շինում են փայտից: Աթոռն ունի ջորս ոտք, նստատեղ և թիկունք: Նստատեղը հիւսած է ծղօտից, բայց տախտակից ու փա-

փուկ կտորից էլ է լինում: Աթոռ շինողին ատաղձագործ են ասում:

Համեմատեցեք սեղանը աթոռի հետ:

Գ ա լ ա թ

Գաւաթը շինում են կաւից: Կաւը բարակ մաղում են, շաղախում, հունցում և ուղած ձեր տալիս: Հաղախը ցամաքում է արևի տակ: Ցամաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և սաստիկ կրակ են վառում տակը: Տաքութիւնից կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրուտ են ասում:

Հանելուկներ՝

1. Չորս եղբայր մի գղակի տակ կարծում եմ թէ չ'գտաք:
2. Վերևից երգիկ, ներքևից դռնակ, մէջ-տեղումը ջուր ու կրակ:

Սեղանը կարասիք է, իսկ գաւաթը աման է: Կուժը աման է, իսկ գահաւորակը... Տուներ շինութիւն է, իսկ մանճակալը... Օրօրոցը կարասիք է, իսկ շիշը... Կարկանդակը ուտելիք է, իսկ կաթսան... Բազկաթոռը կարասիք է, իսկ բաժակը... Մարագը շինութիւն է, իսկ ընկողմարանը...

Տ ա ն ձ ե ը

(Հաշռեցէք տասից մինչև մեկը)

Երեկ պապիս հետ այգի գնացինք
 Եւ տանձի ծառի տակին նըստեցինք.
 Այդ տանձի ծառին տասը հատ տանձ կար.
 Տասը հատ տանձից մի հատն էր ձիճուռու:
 Քամին օրօրեց, ընկաւ այդ մինը.
 Մինը որ ընկաւ, մընաց տեղն իննը:

Իննը հատ տանձեր, խոշոր, հիւթալի,
 Ոստերի վըրայ դեղնին են տալի:
 Պապիս ինդրեցի, որ մէկը ինձ տայ.
 Որ մէկը ինձ տայ, ութը կըմնայ:

Երբ ուտում էի պապիս տըւածը՝
 «Որդիս հիւանդ է—դուք, ձեր Աստուածը—
 Մի հատ ինձ տըւէք», ասաւ մի պառաւ:
 Եօթը հատ մընաց, երբ նա էլ առաւ:

— «Քեզ թոյլ եմ տալիս բոլորը քաղես,
 Առանց զրկանքի արդար բաժանես»,
 Ասաց պապիկս:— Ես կողովն առայ,
 Կատուի պէս ճարպիկ ծառն իվեր ելայ,
 Զգոյշ քաղեցի եօթը հատ տանձը
 Եւ ցած սողացի՝ ձեռքիս այդ զանձը:

«Տես, պապիկ, ասի, էս մինը տատին.
 Թող ներող լինի քըչին ու շատին.
 Նա է ասան մեծը:
 Մնում է վեցը:


Մինն էլ, ի հարկ է, հայրիկիս կըտամ.
 Հինգը կըմնայ կողովում թամամ:
 Բա իմ մայրիկը,
 Հոգոյս հատիկը.

Ամենից լաւը, մեծը, հասածը
 Ես նրան կըտամ,— սրտիս ուզածը:

Է՛հ, չորսը մընաց... կաց, քիչ միտք անեմ.
 Զէ դու ասացիր, որ արդար բաժնեմ.
 Սուրէնն ու Շուշան թող մինն ստանան,
 Երկու կէս անեն, ուտեն լիանան.
 Նրանք փոքրիկ են, կէս-կէս էլ լաւ է.
 Խաչ-որ, պապի ջան, նրանց այդ բաւ է:

Մնացած երեք տանձերիցը մին
 Ես պէտք է հանեմ պահողին բաժին՝
 Մեր այգեպանին,
 Ծերուկ Օհանին:
 Ի՞նչ մընաց տալը.
 Հաշիւը շիտակը:

Երկու հատ մընաց կողովի տակին:
 Մինն էլ ես կըտամ իմ լաւիկ պապին:
 Զէ, չէ, մի մերժիր, պապի ջան, վեր առ.
 Ես ուզում էի քեզ երկուսը տալ,
 Բայց... բայց, պապի ջան,
 Տակը մընացած այն մի հատիկը
 Զէ ինձ է արժան:



Զինութիւն, կառք, նաւ

Շինողթիւն. տուն, խրճիթ, գոմ, ախոռ, մարագ, մեղուանոց, շաղաց, դպրոց, եկեղեցի...

Կառք. սայլակ, սայլ, սահնակ, ֆայետօն, ֆուրգօն, շոգեկառք, հանրակառք, ձիաքարշ, էլէքտրաքարշ...

Նաւ. շոգենաւ, առագաստաւոր նաւ, նաւակ, մակոյկ...

Հաներոսկ

Չորս եղբայր են շատ նման, չորսն էլ շարժուն գնացկան. ֆոքրերն առաջ գուզընթաց, գլորուում են սրբտաբաց. Իսկ մեծերը բարկանում, յետքից վազում, չեն հասնում:

Բառից իօսք կազմեցէք՝

Տուն...

Տան...

Տանը...

Տանից...

Տանով (տնով)...

Տնում (տան մէջ)...



Համբերութիւնը կեանք է

Քոյր ու եղբայր այգի գնացին: Եղբայրը խակ պրտուղներ էր ուտում: — Մի ուտիր, ջանիկս, ասում էր քոյրը. վնաս կըտայ, մի ուտիր: Եղբայրն ականջ չարեց, խակ պրտուղներ կերաւ, հիւանդացաւ: Քոյրը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց, փորին զրեց և ցաւն անց կացաւ:

Ամառն էր. նրանք հանդը գնացին: Եղբայրը վազվզեց, քրրանեց և մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ:

— Մի խմիր, Պետրոս ջան, ազաչում էր Մարիամը. սպասիր, հանգստացիր, յետոյ կըխմես:


Պետրոսն ականջ չարեց, սառը ջուրը խմեց, մրսեց և սկսեց դողացնել: Բժիշկն եկաւ և նրա համար դառը դեղ զրեց:

Զմեռն եկաւ: Մարիամն ու Պետրոսը գնացին գետի ափը: Զուրը ծածկուած էր բարակ սառուցով: Պետրոսն սկսեց սղղալ սառուցի վերայ: Մարիամն ազաչում էր. «Հեռացիր, Պետրոս, դադարիր. սառուցը, տես, չի հաստացել, չի պնդացել»:

Պետրոսն ականջ չարեց քրոջը... յանկարծ սառուցը
կտարուեց և նա շրի տակն արաւ ու խեղդուեց:


Յորենն ու գարին

Գիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում
նա ցորեն ցանեց, միւսում գարի: Արտերն աճեցին, բար-
ձրացան, հասկեր գցեցին: Մի օր գարին սկսեց խօսել.
«Յորեն եղբայր, ասաց նա. վատ տեղ է ցանել մեզ մեր
տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է՝ ո՛չ ոսկի ունի, ո՛չ
արծաթ. ս՛իլ պէտք է մեր յարգը ճանաչէ, մեզ գին տայ-
արի, ցորեն եղբայր, թողենք, հեռանանք այս գիւղից-
արի գնանք այնտեղ, ուր ոսկի շատ կայ»:





Յորենը լսեց զրացու խօսքերը և ասաց. «Շատ ափ-
ստսում եմ, գարի եղբայր, որ միայն քիստըդ ես երկա-
րացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի՞ մենք ման
գանք ոսկու ետևից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոս-
կին ինքն-իրան մեր դուռը կըգայ»:

Կենդանիներ



Չորք-ստուսնի՝ ձի, կով, արջ, փիղ, ոչխար, գայլ...




Թռչուններ՝ հաւ, ծիծեռնակ, արտուտ,
կաքաւ, սիրամարգ...

Չկաներ՝ իշխան, տառեխ, գեղարքունի, կարմրախայտ,
օրագուլ, կողակ, կապուտ (լօքօ)...

Սողուններ՝ օձ, լօկ, մողէս, կրիայ...

Միջատներ՝ ճանճ, մեղու, մրջիւն, մորեխ, մոծակ...



Չ ու կ ը

Կարկաշուն գետակի մէջ մի փոքրիկ ձուկն էր ապրում. նա սիրուն էր, շատ սիրուն. արևի տակ երբ լողում էր, ամբողջ մարմնի թեփուկները փայլում էին ոսկու պէս: Կարմրախայտն էր դա:

Գեղարքունի, իմ լաւ ընկեր, ասաց մի օր Կարմրախայտը. արի լողանք մի քիչ հեռու. առաջ գնանք, իջնենք գետը, տեսնենք ի՞նչ կայ այն ջրերում:

— Ինձ էլ տարէք, ասաց Մուրճան, փոքրիկ բեղերը ցցելով:

— Երկու չլինինք, երեք լինինք. դու էլ արի:

Եւ երեքը միասին առաջ դնացին...

Մէկ էլ յանկարծ մի Գայլաձուկ վրայ վազեց, ուզեց բռնել նրանց, ուտել:

Այդ փոքրերը ինձ են պատկանում, չ'համարձակուիս դրանց կուլ տալ, ասաց Կապուտը քարերի տակից: Եւ Գայլաձկան հետ կռուի բռնուեցան:

Կռուից օգտուելով գետի իշխանը միւս կողմից ելաւ, նրանց վրայ վազեց. բայց Կօղակ ձուկը առաջը կտրեց— իմս են, ասեց, իսկի ձեռք չտաս:

Յանկարծ վերևից լայն սփռոցի պէս մի բան վայր ընկաւ, ամենքին կալաւ, իւր մէջ հաւաքեց... Ծանր ուռկանն էր, որ գետի ափից ձկնորսը ուժով նրանց վրայ նետեց:

— Կորանք, մենք կորանք, ձկներն ասացին, ցանցի մէջ ընկան, ցամաք հանուեցին:



Մ ա Ր Գ ը

Մարմնի անդամները՝ գլուխ, պարանոց (վիզ), բուն, ձեռներ, ոտներ:

Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք, ճակատ, դէմք:

Դեմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան, ծնօտ:

Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

Աչքով տեսնում ենք առարկան, որոշում ենք նրա մեծութիւնն ու փոքրութիւնը:

Ականջով լսում ենք առարկայի ձայնը, որոշում ենք ձայնի ոյժը, քաղցրութիւնը:

Քթով հոտոտում ենք, որոշում ենք առարկայի բուրմունքը, գարշութիւնը...

Լեզուով ճաշակում ենք, որոշում ենք առարկայի քաղցրութիւնը, դառնութիւնը...

Մասներով շօշափում ենք առարկան, որոշում ենք նրա պնդութիւնը, փափկութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, կոշտութիւնը, կոկոթիւնը...

Առածներ՝ Անուշ հոտը վարդից ուզիր, մարդութիւնը մարդից ուզիր:

Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:

Ուրիշի աչքը քեզ համար լոյս չի տալ:

Ն ու ը ի ն

Սաստիկ շոգ ամառ էր. երկնքի երեսին ամպի կտոր չէր երևում. երկիրը քարի պէս պնդացել էր:

Առուները ցամաքել էին, աղբիւրների ջուրը պակասել էր, խոտերը դեղնել էին, արտերը թառամել:

Երկրագործը դուրս էր եկել դաշտը, տխուր նայում էր իր ցանքերին և ասում. «Աստուած ջան, ինչ որ կարող էի, արեցի. հողը բաւական խոր ցելեցի, ընտիր սերմով սերմեցի և ժամանակին ցաքեցի. մնացածը քո սուրբ կամքիցն է կախուած:

Միւս կողմը գիւղի պառաւները ժողովել էին մանր տղաներին, գոյն-գոյն հալաւներով զարդարել էին իրանց ձեռքով շինած խաղատիկինը՝ Նուրին, տուել էին նրանց, և պատուիրել, որ գնան, տընէ-տուն ման գան, փող-մող հաւաքեն, բերեն, մատաղ անեն, որ Աստուծու աչքը քաղցրանայ, երկինքը բացուի, անձրև գայ:

Գնում են մանրիկ տղաները, ման են գալիս տընէ-տուն, ամեն դռան կանգնում են և երգում.

Նուրին-Նուրին եկել է,
Նախշուն Հուրին եկել է,
Շիլայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է:

Եղ բերէք, վարսը քսենք,
Ջուր բերէք, գլխին ածենք,
Մեր Նուրինի փայլ տըւէք,
Ուտենք, խմենք, բէֆ անենք:

Տան-տիկիները դուրս են բերում մի փարչ ջուր, ածում են Նուրինի գլխին, տալիս են մանուկներին՝ որը սև փող, որը իւղ, որը բրինձ. նրանք էլ տանում պառուներին են տալիս, որ մատաղ անեն, աղքատներին բաժանեն:

Ճօլի

(Ս. ր. և ա. բ. է. ր.)

Ճօլի-Ճօլի, ձօլ չըկայ,
Խաւիժ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:

Չըւան բերէք, դուրս հանենք,
Թնկ բերէք, կցան անենք,
Չու բերէք, թաթին դնենք,
Ե՛ղ բերէք, վարսին քսենք:

Սովը պատումն է ժանգոտել.
Չեիչը տափումն է ժանգոտել.
Կանանչ դաշտերին ենք կարօտ.
Կարմիր արևին ենք կարօտ:

Ուլերն ու գայլը

Լինում է-չի լինում մի այժ: Այս այժը անտառում իրան համար տուն է շինում և իր գաւաղների—փոքրիկ ուլերի հետ բնակւում է նրա մէջ: Ամեն առաւօտ մայրը դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՛րդիք, դռները փակեցէք, հանգիստ կացէք և, եթէ զըսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»: Ասում է ու գնում: Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով լցնելուց յետոյ, այժը տուն է գալիս: Տան դռները փակ են: Նա պողերով դուռը ձեծում է ու կանչում:

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պրտուրիկ այծուկներ,

Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուռը»:

Ուրեքը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին զնում է արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը: Նա մտքումը զնում է, որ խաբելով ներս մտնէ ուրիշ փարախը, երբ մայրն այնտեղ չլինի: Մի օր, երբ այժը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթովը դռանը խփում է ու կանչում.

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծուկներ,
Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուռը»:

Ուրեքն ականջ են զնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողը իրանց մայրը չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիք, հեռացիր այդ տեղից. մեր մայրը բարակ ձայն ունի և քաղցր է մկկում. դուռն էլ պողերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց չեն անում: Գայլը թողում, հեռանում է: Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը. նա գովում է ուրեքին, որ ճ գուռը՝ բաց չեն արել: — «Դուք շատ լաւ էք արել, սրդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենիդ էլ կ'ուտէր»:

Պառաւն ու այծը

Մի խղճուկ պառաւ կար շատ հին ժամանակ.
Նրա նիստ ու կացը պատմեմ իմանաք.

Պատմեմ, պատմեմ, պատմեմ, իմանաք:

Պառաւը աղքատ էր, կով, գոմէշ չունէր.
Դիփ եղած-չեղածը մի այծ, մի տուն էր.
Մի այծ, մի այծ, մի այծ, մի տուն էր:

Տունն էլ մի ծակուռ էր, գեանի մէջ փորած.
Ինքը մի խեղճ կընիկ, կորած-մոլորած.
Կորած, կորած, կորած-մոլորած:

Այժը նա պահպանեց ամբողջ ձմեռը.
Մօտիկցաւ գարունը, թեթևցաւ բերը.
Ի՜նչ լաւ, ի՜նչ լաւ, թեթևցաւ բերը:

«Այժմ արօտ կ'երթանք, մազմըզոտ ընկեր.
Կ'ուտես կանաչ խոտը, թարմիկ, կաթնաբեր.
Թարմիկ, թարմիկ, թարմիկ, կաթնաբեր»:

Դու ինձ կաթ կըբերես, կը հոգամ տունըս,
Կըծածկեմ մարդկանցից իմ խեղճութիւնըս.
Հա-հա, հա-հա, իմ խեղճութիւնըս»:

Այսպէս խօսեց տատը մի լաւ առաւօտ,
Կաթնատու այծիկը դուրս տարաւ արօտ.
Ուրախ-ուրախ դուրս տարաւ արօտ:

Բայց խեղճ կնոջ բախտից քամի վերկացաւ,
Ձիւն, բուք ու փոթորիկ չորս կողմ բարձրացաւ.
Վայ-վայ, վայ-վայ, չորս կողմ բարձրացաւ:

Պառաւը մոլորուեց, այժը կորցրեց.
Գայլը նըրան ճանկեց, փորը լքցրեց.
Կերան, լափեց, փորը լքցրեց:

Մեծ նանը տուն դարձաւ արցունքն աչերին,
Այծից, կաթնից զրկուած այն ցուրտ օրերին.
Ախ-վախ, ախ-վախ, այն ցուրտ օրերին:

Մ ե ղ ու ն ե ը

Գարունն սկըսուեց. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցին և փոքրիկ տերևներ առաջ բերին:

Ահա մեղուն էլ զարթեց ձմերային քնից, սրբեց աչերը բրդոտ թաթիկներով, զարթեցրեց ընկերներին և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային ցուրտ քամին անցել են:

Մեղունները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Միրուն ծիրանի, մի բան չունիս խեղճ մեղուններիս համար. մենք երկար ժամանակ քաղցած ենք»:

— Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկներս դեռ պահուած են կոկոններիս մէջ: Գնացէք, նշենուն հարցրէք:

Մեղունները թռան, գնացին նշենու մօտ: «Միրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուններիս համար»:

— Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց նշենին. այսօր ինձ վրայ ո՛չ մի բացուած ծաղիկ չկայ. իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:

Թռան մեղունները կակաչի մօտ, նայեցին նրա փայլուն գլխին. բայց նա էլ ո՛չ հոտ ունէր և ո՛չ մեղր:

Մեղունները արտում և քաղցած կամենում էին յետ գնալ տուն, բայց տեսան թփի տակ մանուշակի մուգ-կապոյտ ծաղիկը: Սա բաց արաւ մեղունների համար իր կոկոնները, որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցը հիւթով: Կերան-խմեցին մեղունները և ուրախ զըլարթ յետ դարձան տուն:

Չորս ցանկութիւն

1. Չմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինը իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ սառուցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-ուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Մ.խ, հայրիկ, ի՛նչ պատուական եղանակ է ձմեռը. սրբան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագնդի ենք խաղում, սղղում ենք սառուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք... Մ.խ, ի՛նչ կըլինէր, որ միշտ ձմեռ լինէր»:

Հայրը հանեց ծոցի տետրակը և ասաց. «Գրի՛ր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Չմեռն անց կացաւ: Գարունը եկաւ: Բացուեցան ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամենայն տեղ ուտոտում էին հազարաւոր թիթեռներ ու բզէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց. իսկ երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ սրբան ուրախացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը և եթէ ինձ մնար, ես կըցանկանայի, որ միշտ գարուն լինէր»:

Հայրը հանեց տետրակը և առաջարկեց Գարեգնին, որ իւր ցանկութիւնը գրէ: Գարեգինը գրեց:

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտերը հասել էին և հնձող էին կանչում: Գարեգինն ու հայրը գնացին խոտ հնձելու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինը իւր զուարճութիւններն էր անում՝ ձուկն էր բռնում գետիցը, հատապտուղներ էր հաւաքում, պորբում էր հոտաւէտ խոտերի վրայ: Երեկոյեան, տուն յետ դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես անչափ ուրախացայ. երանի ամառը վերջ չունենար»:

Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում լաւ-լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սեր-

կէիլը, խաղողը... Մարդիկ դուրս էին եկել այգեկուծի:
Գարեգինն էլ իր ծնողների հետ զնաց այգի և քաղն
սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա
մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խա-
ղում և հատապտուղները բերանը գցելով՝ անուշ անում:
Վերջը նա վազեց հօր մօտ, փաթաթուեց նրա պարանոցով
և ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն
է»: Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց
տրւեց, որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար
էլ միևնոյն բանն է ասել:

Հանելուկների բացատրութիւնը

- Երևա՝ 20. I Փետուրէ գրիչ: II Հոր:
» 25. I Զու: II Գնացկան ջուր. գետ:
» 33. I Գրասեղան. II. Հեշտաեռ (սամօվար):
» 36. I Կառքի անիւները:



0/0
| | Арм.
| | 3-270

| |
| | ԳԻՆՆ Է 20 Կ. | |
| |

ԳՈՒՄԱՐՈՎ—14 Կ.

2018

4549

« Ազգային գրադարան



NL0063112

